ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Ռուբիկ Հակոբյանի, Ջարուհի Փոստանջյանի և Ալեքսանդր Արզումանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-063-30.08.2012-ՊԻ-010/0) վերաբերյալ:

Համաձայն օրենքի նախագծի 2-րդ հոդվածի՝ քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բնակվող կամ գտնվող ընտրողների ցուցակները կազմում են օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների ղեկավարները: Միևնույն ժամանակ, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության բացակայության դեպքում, Հայաստանի Հանրապետության քաղաքացին ընտրողների ցուցակում գրանցվելու հայտով կարող է դիմել սահմանակից կամ

AJV-39-03_2012-09-27_01d10.1d13861-12_2012-10-03

իր բնակվելու կամ գտնվելու վայրին ավելի մոտ գտնվող պետությունում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն:

Նշենք, որ օտարերկրյա պետություններում բնակվող կամ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները քվեարկությանը մասնակցում էին մինչև 2005 թվականի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների ընդունումը և 2007 թվականին «Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով երկքաղաքացիության ինստիտուտի ներդրումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, կարևորելով Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող կամ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումը, այնուամենայնիվ, գտնում է, որ ներկայացված օրենքի նախագիծը լիարժեքորեն չի կարգավորում բոլոր հարաբերությունները: Ավելին, կարծում ենք, որ օրենքի նախագիծն առաջադրում է լուծում պահանջող մի շարք հարցեր, մասնավորապես՝

1) դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության կողմից ընտրողների ցուցակների ձևավորումը լիարժեք չի կարող իրականացվել առկա տարբեր՝ տեխնիկական, ֆինանսական և այլ բնույթի բարդությունների պատճառով.

2) բացակայում են ցուցակների ճշտության նկատմամբ վերահսկողության մեխանիզմները: Ցուցակների հավաստիությունը կարող է արդյունքների բողոքարկման պատճառ հանդիսանալ, որը կարող է անլուծելի լինել.

3) չի ապահովվի Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի՝ ընտրություններից 40 օր առաջ վերջնական ցուցակների հրապարակման և 10 օր առաջ դրանց վերահաստատման պահանջները՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների թվի փոփոխմամբ (գործուղում, արտագնա աշխատանք, առողջապահական (բուժման) խնդիրներ, զբոսաշրջություն, բիզնես-հանդիպումներ, բանակցություններ և այլն).

4) խնդրահարույց է քվեաթերթիկների տրամադրման հարցը, քանի որ օրենքի նախագծով բացառվում է գործող օրենսգրքով նախատեսված էլեկտրոնային եղանակով քվեարկության իրականացումը.

5) օրենքի նախագծի ընդունման դեպքում կխախտվի կից հիմնավորման մեջ մատնանշված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-ին հոդվածը, քանի որ Հայաստանի Հանրապետությունում ընտրական տեղամասերը կազմավորվում են ոչ ավելի 2000 ընտրողի հաշվարկով և ընտրողի ընտրությանը մասնակցելու մատչելիության սկզբունքով: Մինչդեռ, համաձայն օրենքի նախագծի, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բնակվող կամ գտնվող ընտրողները քվեարկությանը մասնակցելու նպատակով պետք է այցելեն իրենց գտնվելու վայրին ավելի մոտ գտնվող կամ սահմանակից պետություն: Այս դեպքում էլ ընտրական իրավունքի իրականացումն ընտրողի համար առաջացնում է ֆինանսական ծախսեր, մուտքի և ելքի թույլտվության հետ կապված վարչական բարդություններ և այլ խնդիրներ.

6) լուծված չեն քարոզչության իրականացման խնդիրները:

Ելնելով շարադրվածից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեռևս բացակայում են քաղաքացիների հաշվառումն ապահովող գործուն մեխանիզմները, Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետություն ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետություն ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

AJV-39-03_2012-09-27_01d10.1d13861-12_2012-10-03

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների, վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ՀՀ ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«ՀՀ ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է ՀՀ տարածքից դուրս բնակվող կամ գտնվող ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիների՝ ՀՀ համապետական ընտրություններին մասնակցելու իրավունքին* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում***:

AJV-39-03_2012-09-27_01d10.1d13861-12_2012-10-03

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«ՀՀ ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կարգավորվում է ՀՀ տարածքից դուրս բնակվող կամ գտնվող ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

AJV-39-03_2012-09-27_01d10.1d13861-12_2012-10-03

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **չեզոք ազդեցություն:**

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորներ Ռուբեն Հակոբյանի, Զարուհի Փոստանջյանի և Ալեքսանդր Արզումանյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական բյուջեի մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

AJV-39-03_2012-09-27_01d10.1d13861-12_2012-10-03

ՆԱԽԱԳԻԾ

Պ-063-30.08.2012-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 2-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1 մասով.

«1.1 Ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող կամ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրական իրավունք: Հայաստանի Հանրապետության դիվանագիտական եւ հյուպատոսական ներկայացուցչությունները սույն օրենսգրքով եւ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով ապահովում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 7-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1, 2.2 եւ 2.3 մասերով.

«2.1 Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում եւ կարգով ընտրողների ցուցակները կազմում են օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների ղեկավարները:

2.2 Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կազմվող՝ ընտրողների ցուցակներում ընդգրկվում են ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր քվեարկության օրը բնակվում կամ գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

2.3 Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացին, ընտրողների ցուցակում գրանցվելու հայտով, կարող է դիմել սահմանակից կամ իր բնակվելու կամ գտնվելու վայրին ավելի մոտ գտնվող պետությունում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն:»:

Հոդված 3. 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբա րությամբ.
«Քվեարկության օրը այլ պետություններում բնակվող կամ գտնվող Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները կարող են մասնակցել համապետական ընտրություններին՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով եւ ժամկետներում:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հայաստանի Հանրապետության (այսուհետ նաեւ՝ ՀՀ) Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Նշված իշխանությունը ժողովուրդը իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաեւ Սահմանադրությամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի:

Վերը նշված հոդվածների բովանդակության վերլուծությունից հետեւում է, որ պետության ինքնիշխանության կարեւոր գրավականներից է այն, որ տվյալ երկրում իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն այն իրականացնում է մի շարք եղանակներով, այդ թվում՝ ազատ ընտրությունների միջոցով:

Ընդ որում, ընտրություններն, ըստ ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի, պետք է լինեն ոչ միայն ազատ, այլեւ դրանց հիմքում պետք է ընկած լինի ընդհանուր, հավասար եւ ուղղակի ընտրական իրավունքը, որն ապահովվում է գաղտնի քվեարկությամբ:

Խոսքը վերաբերում է Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության? տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու եւ հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաեւ անմիջականորեն եւ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը եւ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության նույն հոդվածը սահմանափակում է վերը նշված ՀՀ քաղաքացիների ընտրելու եւ ընտրվելու իրավունքը միայն դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաեւ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված եւ պատիժը կրող քաղաքացիների համար:

Վերը նշվածից հետեւում է, որ երկրի հիմնական օրենքը, որտեղ նախատեսված են եւ պետք է նախատեսվեն մարդու եւ քաղաքացու հիմնարար իրավունքներն, ազատությունները եւ դրանց սահմանափակումները, բացի վերը նշվածից, ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի համար որեւէ այլ սահմանափակում չի մատնանշում, հետեւաբար եւ նշված իրավունքի որեւէ այլ սահմանափակում ամրագրելը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Վերոգրյալից հետեւում է, որ ՀՀ սահմաններից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիները ՀՀ սահմաններում բնակվող (գտնվող) ՀՀ քաղաքացիների հետ հավասար ունեն եւ պետք է ունենան ընտրելու եւ ընտրվելու օրենքով ամրագրված հնարավորություն, որի իրականացման մեխանիզմները պետք է սահմանված լինեն ՀՀ օրենսդրությամբ, իսկ դրանց գործնական իրականացումը պետք է ապահովվի ՀՀ պետական համապատասխան մարմինների գործունեությամբ: Այսպիսով, "Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին" օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է նաեւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30-րդ հոդվածով սահմանված ընտրական իրավունքի կիրարկումն ապահովելու անհրաժեշտությամբ, մեջբերում ենք հոդվածն ամբողջությամբ.

Հոդված 30. Հայաստանի Հանրապետության? տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու եւ հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաեւ անմիջականորեն եւ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը եւ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:

Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց? տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին եւ տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

Ընտրել եւ ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաեւ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված եւ պատիժը կրող քաղաքացիները:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բնակվող կամ գտնվող ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները չեն մասնակցում Հայաստանի Հանրապետության համապետական ընտրություններին: Գործող ընտրական

օրենսգիրքը քվեարկության օրը միայն Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողներին եւ նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամներին եւ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձեւից) արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների? ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցների եւ նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի? ընտրելու իրավունք ունեցող անդամներին է հնարավորություն ընձեռում մասնակցել համապետական ընտրություններին: Համապետական ընտրությանը մասնակցելու հնարավորությունից ներկայումս չեն օգտվում արտերկրում գտնվող ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացի հանդիսացող ուսանողները, աշխատանք փնտրելու նպատակով արտերկիր մեկնած եւ այլեւայլ պատճառներով արտերկրում գտնվող անձինք: Իրականում, այսպես թե այնպես, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունները վերոնշյալ երկու կատեգորիաների անձանց համար կազմակերպում է համապետական ընտրություն եւ առաջարկվող փոփոխության ընդունվելու դեպքում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական եւ հյուպատոսական ներկայացուցչություններում պարզապես կավելանան ընտրությանը մասնակցող ընտրողների թիվը: Փաստացի, ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածով սահմանված ընտրական իրավունքից օգտվում են միայն քվեարկության պահին Հայաստանի Հանրապետությունում գտնվող ՀՀ քաղաքացիները, որն ընտրական իրավունքի իրացման խտրական դրսեւորում է:

Իրականում, ընտրական իրավունք ունեցող, սակայն ինչ-ինչ հանգամանքներից ելնելով Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող քաղաքացիներին? ընտրությանը մասնակցելու հնարավորությունից զրկելով խախտվում է նաեւ ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածը.

Հոդված 14.1. Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջեւ:

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Պետությունը պարտավոր է հավասար հնարավորություններ ստեղծել ընտրական իրավունք ունեցող բոլոր քաղաքացիների ՀՀ Սահմանադրությամբ սահմանված բոլոր իրավունքներից հավասարապես օգտվելու համար:

Առաջարկվող օրենքի նախագծով հավասար հնարավորություններ կստեղծվի քվեարկության օրը ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Հանրապետությունից դուրս գտնվող քաղաքացիների համար պետական կառավարմանը մասնակցելու առումով: